

ԱՐԱ ՆՈՎԱՍԵՓՅԱՆ

ԵՊՏԱՄԱՐՎԱԾԱՐԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԶԻ «ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ» ԵՎ «ՏԵՍԻՆԸ»

Ս. Գրիգոր Լուսավորիչը, անկյունաքարային դեր կատարելով հայ ժողովրդի քրիստոնեացման պետականացման գործում, իր հեղինակությունը և հայ մարտնչության մեջ: Ս. Գրիգորի անունով մեզ են հասել մի շարք երկեր, որոնք էական ազդեցություն են թողել հայ քրիստոնեական մարտնչության զարգացման վրա: Չքննելով այս երկերի հեղինակային պատկանելությունը՝ փորձենք անդրադառնալ նրանց, քանի որ միայն Լուսավորչի անունը կրելը ցույց է տալիս այդ երկերի վայելած հեղինակությունը: Ս. Գրիգոր Լուսավորչի անունով հայտնի են 2 հիմնական գործեր, ինչպես նաև հեղինակային բնագրերը.

1. «Նաճախապարտում» ճառերը,
2. «Վարդապետությունը», որ գեղեցիկ է Ազաթանգեղոսի պատմության մեջ,
3. 30 կանոններ, կցված Նիկիայի 325 թ. Տիեզերաժողովի կանոններին,
4. «Կանոն Սրբոյն Գրիգորի Պարթևի. դարձնալ յարցումն և պատասխանիք» երկը,
5. «Սահմանադրություն կարգաց, ընկալեալ ի նահապետէն տեսնել Գրիգորէ, թարգմանեցաւ ի ձեռն Եզնկայ, հրամանաւ երանելոյն Սահակայ Եպիսկոպոսապետին Նայոց և նորին աթոռակցաց, թէ որպէս սահմանեցաւ կարգ ուխտի և որոշումն վանաց» վանական սահմանադրությունը,
6. Ժամագրքի «Աստուած մեծ, հզօր և փառաւորեալ» մաղթանքը,
7. «Օրհնեալ է մարդասիրութիւն Քոյ, Տէր իմ» աղոթքը,
8. «Աղաչեմ գժեզ» աղոթքը,
9. Պատարագամարտիցի մի խմբագրություն:

«Սուրբ Գրիգորի վարդապետությունը» գտնվում է Ազաթանգեղոսի Պատմության «Վարդ և պատմություն Սրբոյն Գրիգորի» և «Դարձ փրկության աշխարհիս Նայաստան» բաժինների միջև: Այն հանդիսանում է հայ եկեղեցական մարտնչության ամենանշանակալից աստվածաբանական աշխատություններից մեկը:

«Վարդապետության» աստվածաբանությունը

Անդրադառնալով «Վարդապետության» աստվածաբանությանը, անհրաժեշտ ենք համարում նշել, որ այն բաղկացած է հեղինակային միավորներից.

ա. Երրորդաբանություն

Նախկանական է, որ «Վարդապետությունը» սկսվում է քրիստոնեական հիմնասյուն հանդիսացող Երրորդաբանությամբ կամ, ավելի ճիշտ՝ Ս. Երրորդության վերաբերյալ դավանական բանաձևով. «Տէր Աստուած, որ Նա միայն ինքնութեամբ, և ոչ ոք յառաջ քան

զՆա. չիք որ այլ Արարիչ ամենայնի՝ որ երևի և որ ոչն երևի. բայց Որդին միածին որ ի Տօրե ծնեալ, և Հոգի Նորուն, որ ի Նորին յեութենէ. որով եղև աշխարհս ի սկզբանց անդ, արարեալ միասնական Երրորդութեան... » (§ 259):

«Տաճախապարտմի» պես հեղինակը նախևառաջ ուշադրություն է դարձնում Աստվածության ինքնագոյությանը, որը ինչ-որ րեղ կարող է խոսել այս երկու աշխարհությունների դավանական ընդհանրությունների մասին: Մեկ այլ րեղ՝ Լէ հաղվածում, հեղինակը ներկայացնում է Տաճախո հանգանակը. «Զի հաւաքովք ճշմարտեսցուք ի մի Աստուած Հայր և Տէր և Արարիչ ամենայնի, և ի միածին Որդին, որ ի Տօրե և առ Տօր և ընդ Տօր, և ի Սուրբ Հոգին, որ ի Նորին էութենէ... մի րեղութիւն, մի գօրութիւն... երեք կապարեալ անձինք, մի կապարեալ կամք. անպարտմ, անքնին միութիւն Երրորդութեանն. մի իսկութիւն, մի էութիւն, մի Աստուածութիւն, Հայր և Որդի և Սուրբ Հոգին. երեք անձինք, մի գօրութիւն Աստուածութեանն. Հայր յանձնէ, Որդի ի Տօրե, Հոգի ի նոցունց ի Նոսին... » (§ 362):

Այսպիսով, ինչպես երևում է, «Վարդապետության» երրորդաբանությունը հիմնականում կրկնում է Եփեսոսի Տիեզերածողովի բանաձևերը, ինչպես, օրինակ, նույն հաղվածի մեկ այլ րեղում. «երեք կապարեալ անձինք, մի կապարեալ կամք. անպարտմ, անքնին միութիւն Երրորդութեանն»:

բ. *Քրիստոսաբանություն.*

Քրիստոսի մարդեղության և բնության խնդիրներին անդրադարձ գտնում ենք «Վարդապետության» հետևյալ հաղվածներում. «Քանզի միացաւ ի մարմնի բնութեամբ, և խառնեաց գմարմինն ընդ Իր Աստուածութիւնն» (§ 369), «Այլ կայ յԻրում բնութեանն. որպէս և Ինքն ասէ... Զի թէպէր զկերպարանս առ և գմարմին մարդկան՝ այլ խառնեաց միացոյց ընկղմեաց գմարմինն յԱստուածութեան Իրում» (§ 378), «Թէպէր և զգեցաւ մարմին, և էջ ի մեր նմանութիւն՝ այլ կայ ի փառս հայրենի բնութեանն Աստուածութեան... յիրում բնութեանն, հանդերձ մարմնովն...» (§ 381):

Դժվար չէ նկատել, որ «Վարդապետությունը» ամբողջովին խաթսխված է միաբնակության ըմբռնման վրա: Երևի թե այս հանգամանքով է պայմանավորված «Վարդապետության» մեծ ազդեցությունը հետագա հեղինակների և նրանց սրբեղծագործությունների վրա:

Վարդապետությունում առավել հանգամանալից է ներկայացվում Քրիստոսի մկրտությունն ու խաչելությունը: Այստեղ կարևորագույն րեղ է հատկացված Հովհաննես Մկրտչին, որը իր անձի մեջ էր միավորում հին ուխտը՝ քահանայությունը, մարգարեությունը և թագավորության օծությունը. «Զի ի նա հասեալ էր յառաջին նախնեացն՝ թագաւորացն, մարգարէիցն և յօծելոց քահանայիցն՝ իբրև յաւնդապահ, և նա եր գքահանայութիւն, գօծութիւն, գմարգարէութիւն և գթագաւորութիւն գՏէր մեր Յիսուս Քրիստոս...» (§ 433): Այս ավանդը Քրիստոսը փոխանցում է առաքյալներին, որոնք քարոզում են ամբողջ աշխարհում. «Եւ եղև իսկ հիմունք առաքեալքն, և առին շնորհս քահանայութեան և մարգարէութեան և առաքելութեան» (§ 490):

Խաչելության պարագային հեղինակը առանձին ուշադրություն է դարձնում խաչին, որը համեմատվում է Բաբելոնյան աշտարակի հետ. ինչպես որ այն ցրեց մարդկությանը և խառնեց լեզուները, այնպես էլ խաչը միավորեց ի Քրիստոս. «Զի յառաջին աշտարակէն ցրումն

եղև, իսկ ի խաչեւ՝ ժողով» (§ 629): Բարեւոյնի աշտարակաշինությունից մարդկությունը բաժանվեց 72 ազգերի, դեկավարվելով Ծննդոց գրքում հիշատակված 72 նահապետների կողմից: Խաչելությունից հետո 72 առաքյալները վերամիավորեցին մարդկությանը: Բացի վերը նշվածից՝ խաչը խորհրդանշում է եկեղեցու Ս. Սեդանի 4 անկյունները և աշխարհի 4 կողմերը: Այսպիսով, «Վարդապետության» մեջ այսպիսով արտացոլվել է Ս. Խաչի խորհրդանշական ըմբռնման վաղ շրջանի օրինակներից մեկը:

գ. Արարչագործության վերաբերյալ վարդապետություն.

Արարչագործությունը ներկայացվում է Ծննդոց գրքի օրինակով: Սակայն Կեսանելի արարչությունից զատ կատարվում է նաև աննյութական աշխարհի սրեղծագործությունը, այսինքն հրեշտակների, որոնք լցնում են երկինքը և փառաբանում են Աստծուն: Երևելի արարածների մեջ կենսոլորտական տեղ է գրավում մարդը, որը Աստծո կողմից կարգված է իշխան ողջ աշխարհի վրա: Մնացյալ բոլորը պետք է ծառայեն մարդուն: Հրեշտակների նման մարդը ունի անձնիշխանություն, ազատ գործելու կամք: Այս անձնիշխանության շնորհիվ է, որ մարդ արարածը նմանվում է Աստծուն (կամ ավելի ճիշտ՝ ազատ կամքը Աստծո պարկերն է մարդու մեջ): Մեկ այլ տեղ, ըստ հեղինակի, մարդուն աստվածամանեցնում է գիտությունը. «Ջի գգիտութիւն Տեսան ի մէջ անցուցեալ, Նորա գիտութեամբ զՆորա արարածս ճանաչել՝ Նորա նման անուանեցաւ» (§ 264):

Չարը, նախանձելով մարդու դիրքին, այնպես արեց, որ նա խախտի իր անձնիշխան ազատությունը, այսինքն մարդը, ճաշակելով արգելված ծառից, զրկվեց անմահությունից: Ենովքը դարձավ այն մարդը, որի օրինակով Աստված ցույց տվեց, որ մարդկությունը կարող է վերադառնալ անմահությանը: Այս պարճառով Աստված ուղարկեց Իր միածին Որդուն:

դ. Վախճանաբանություն.

Վախճանաբանական ըմբռնումները առանձնակի տեղ են գրավում Վարդապետությունում: Մեռյալների հարությանը նվիրված է 18 պարբերություններից բաղկացած մի հատված, ուր արդեն զգնում ենք զարնան՝ որպես Քրիստոսի հարության խորհրդանշիչը: Ինչպես զարնանը արթնանում է ողջ բնությունը, այդպես էլ Երկրորդ Գալուսից հետո մարդիկ պետք է մարմնապես վերականգնվեն. «Ջի միանգամայն կազմիցին զոսկերօքն չորացելովք՝ միսքն և ջիղքն և աճառքն և նեարդքն, մորթովքն զգեցեալք և մագովքն զարդարեալք» (§ 648):

Չնայած որ Վարդապետության մեջ հիմնականում խոսվում է մեռյալների հարության մասին, սակայն Ազաթանգեղոսի մեկ այլ՝ «Լուսավորչի տեսիլքը» հատվածում կան Հայաստանի աշխարհի պապային վերաբերվող հատվածներ:

«Լուսավորչի տեսիլք»

Գրիգոր Լուսավորչի Տեսիլը հայ վախճանաբանական և «տեսիլաբանական» (visionar) գրականության ամենավաղ և բարձրագույն օրինակներից է: Այն բաղկացած է 2 հատված-

ներից՝ բուն տեսիլից և վերջինիս մեկնությունից: Մենք բուն տեսիլքը և նրա մեկնությունը կներկայացնենք միասին:

ա. «Էջմիածնի» տեսիլքը.

«Էջմիածնի» տեսիլքի ներածության մեջ հեղինակը խոսում է իրեն երևած երկնային ուժերը առաջնորդող ուժնավոր այրի և խորհրդավոր պարկերների մասին. «Եւ մի ահաւոր տեսիլ մարդոյ բարձր և ահեղ, որ զառաջն ունէր և զէջսն ի վերուստ մինչև ի խոնարհ առաջասիլ յարդոյ բարձր և ահեղ, որ զառաջն ունէր մի մեծ ոսկի. և այն ամենայն զհետ խաղացեալ գայր: պահ յառաջեալ, և ի ձեռին իւրում ուն մի մեծ ոսկի. և այն ամենայն զհետ խաղացեալ գայր ըստ նմանութեան արագաթն արծուոյ. և եկն էջ եհաս մինչև մօտ ի յարակս...» (§ 735):

Առաջին պարկերը բացված երկնքի տեսարանն է. «Տեսի բացեալ զհասարակութիւն երկնից և զգոյրսն որ ի վերայ նորա՝ ըստ հասարակութեանն պարամելոյ, զի ըստ նմանութեան ձորոց իբրև զկալարս լերանց՝ յայս կոյս յայն կոյս բաժանեալ դիզեալ կային անբաւարարութիւնք անկշռելութեան ական տեսանելոյ: Եւ լոյսն հոսեալ վերուստ ի վայր մինչև յերկիր հասանէր. և ընդ լուսոյն՝ զօրք անհափք լուսեղէնք երկրեանք ի տեսիլ մարդկան...» (§ 734): Այնուհետև տրված մեկնությամբ ներկայացվում է տեսիլքի այլաբանական բովանդակությունը. «Ջի բացեալ են աւաղիկ երկինք՝ զիտեա զի բացեալ են դրունք մարդասիրութեանն. Զրիստոսի առ Իւր արարածս: Եւ ձայն բարբառոյ որոտմանն, զիտեա զի իջանէ անձրև ողորմութեանն և զթութեանն Աստուծոյ: Բացեալ են աւանիկ դրունք երկնից, բացան և ջուրքն որ ի վերայ նորա, զի մի արգել լիցի այսմ աշխարհի մարդկան՝ ելանել ի վեր: Զի սուրբ վկայքս այս, որ աստ աստ վկայեցին՝ հիսիսական կողմանցս ճանապարհ գործեցին. զի ինքեանք ելին և այլոց շախիզս ուղղեցին...» (§ 741):

Բավականին գեղեցիկ է եկեղեցու պարկերը. «Որոյ սեանն խարիսխն ոսկի է, և նորուն սիւնն հրեղէն, և թակաղաղն ամպեայ, և խաչն լուսեղէն ի վերայ նորա. ոսկի խարիսխն՝ վէմն հասարակութեան անշարժութեան է. և սիւնն հրեղէն՝ կաթողիկէ եկեղեցի է, որ ժողովէ զամենայն ժողովուրդս ի մի միաբանութիւն հաւաքոց ի ներքոյ թևոց իւրոց» (§ 744):

Քահանայության կամ, ավելի ճիշտ՝ քահանայապետության կենտրոնը պետք է հանդիսանա տեսիլքում ցույց տրված վայրը. «Իսկ խաչն լուսաւոր ի նմա՝ է ինքն մեծ քահանայապետութիւնն ի մէջ ժողովրդոցն... Եւ տեղին այն լիցի Կաճար Աստուծոյ, և Կուն աղօթի խնդրածոց ամենայն հաւատարեցելոց, և աթոռ քահանայապետութեանն» (§ 745): Տեսիլքում, ինչպես հայտնի է, ներկայացվում է ոչ միայն Մայր Տաճարը, այլև կույսերի նահապետության տեղում կառուցվելիք երեք վկայարանները. «Իսկ երեք ևս, որ ունէին զտեղի վկայարանացն հանգստի սրբոցն՝ զի ի տեղոջ հեղման արեանն իւրեանց շինեսցին վկայարանք հանգստի ոսկերաց իւրեանց» (§ 748):

Տեսիլքը սակայն անդրադառնում է ոչ միայն եկեղեցու ընդհանուր պարկերին, այլև խորհուրդների նկարագրությանը. «Եւ հրեղէն սեղանոցն բազմութիւնք որ քեզդ երևին՝ ճշմարտիւ իսկ լինելոց են սեղանք Աստուծոյ, որ զբաւութիւն բաշխեն ամենեցուն: Եւ հրեղէն յայն սակս երևեսցաւ, զի պաշտօն Տոգոյն եղիցի փառօք: Եւ սիւնք մի մի առ սեղան՝ պաշտօն աղօթից քահանայութեան...» (§ 752):

բ. Հայաստան աշխարհի ապագայի նկարագրությունը

Ի փարբերություն փեսիլքի այլ հարվածների, ապագայի այս հարվածը բավականին փոքր է և բաղկացած է 3 պարկերներից: Առաջին պարկերը, որը հայ ժողովրդի քրիստոնեացումն է, նույնպես ցույց է տրված խորհրդանշական պարկերների միջոցով. «Եւ փեսի հօրս անթիս այծեաց ի գոյն սևութեան, որք անցեալք ընդ ջուրն՝ յօղիս դարձան. և զգոյնս իւրեանց ի կերպարանս սպիտակութեան շրջեցին...» (§ 740): Մյուս պարկերում ներկայացվում է ճշմարիտ հավաքից հեռանալը. «Իսկ յանկարծ այլ ծնունդք յաճախեցին բազմացան, և կէսքն անկեալ ելին յայնկոյս ջրոյն: Եւ գառինքն զայլք եղեն թուխք, և յարձակեցան ելին ի մէջ հօրիցն, և սկսան կոտորել, և եղեն արեան ճապաղիք» (§ 740):

Երրորդ պարկերում ասվում է. «...Եւ բուսան թեք հօրիցն, և եղեն թևաորք, և վերացան խառնեցան ի գօրս լուսեղէնս: Եւ յարեալ հեղեղ հրեղէն, և արկեալ փարալ զգայսն» (§ 740): Այս հարվածի մեկնությունը հիմնականում կրկնում է շարադրանքը. «Ի յեփին ժամանակս անօրինելոց են, անկեալք ի ճշմարտութենէն. ընկելոց են յեփս գդրոշմ ուխտին սրբութեան Աստուածութեանն, և ...հանեն ճապաղիս արեան գառանցն, այս ինքն ուխտին և քահանայութեանն, և խռովութիւն ժողովրդոցն» (§ 754): Այնհայտ է կապը Աստվածաշնչի Մատթ. ԻԴ 3-32, Մարկ. ԺԳ 3-13, Դով. ԻԱ 7-19, Բ Թես. Բ 1-12 և Հայտնության ԺԳ զլիս հարվածների հետ:

Տեսիլն ավարտվում է մարգարեություններին բնորոշ հորդորախրատական ոճով. «Իսկ որ համբերենն միամտութեամբ ի գառանցն, ի ժողովրդոցն կամ ի քահանայիցն՝ թևս առնուցուն և յարքայութիւն Բրիստոսի վերանան: Իսկ որ զմիփս գայոցն կամ զգործս յափըշտակութեան նոցա ունիցին՝ ի հուրն անշէջ մաքնեացին» (§ 754):